ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը կից
հասարակական խորհրդի նախագահ
պարոն Գևորգ Պապոյանին
«ԷվենտՏուրա Իրադարձային Զբոսաշրջության Զարգացման»
Հիմնադրամի տնօրեն Ալիսա Օհանյանից

Դիմում

Հարգելի պարոն Պապոյան,

Հիմք ընդունելով ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից հասարակական խորհրդի ձևավորման վերաբերյալ հայտարարված գործընթացը՝ խնդրում եմ ընդգրկել «ԷվենտՏուրա Իրադարձային Զբոսաշրջության Զարգացման» հիմնադրամին նախարարությանը կից հասարակական խորհրդի կազմում:

Հիմնադրամը գրանցված է՝
Անվանումը՝ «ԷվենտՏուրա Իրադարձային Զբոսաշրջության Զարգացման» հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Խորենացի 26Ա, 222 սենյակ
Տնօրեն՝ Ալիսա Օհանյան

Հիմնադրամը գործում է Հայաստանի ողջ տարածքում՝ նպատակ ունենալով զարգացնել Հայաստանը որպես առաջատար իրադարձային զբոսաշրջության ուղղություն՝ մեծամասշտաբ միջոցառումների և փառատոնների միջոցով: «ԷվենտՏուրա»-ն ոչ միայն կազմակերպում է երկրի ամենամեծ միջազգային տուրիստական միջոցառումները (Երևանի Գինու Օրեր, Երևանյան Գաստրոնոմիկ Օրեր, Գարեջրի Օրեր և այլն), այլև համագործակցում է այլ տարածաշրջանային փառատոնների հետ՝ տրամադրելով մասնագիտական խորհրդատվություն և աջակցություն:

Մեր նախաձեռնություններն ուղղված են ոչ միայն տեղական տնտեսության ակտիվացմանը, այլև Հայաստանի մշակութային և գաստրոնոմիկ ժառանգության ներկայացմանը միջազգային մակարդակով: Մենք սերտ համագործակցում ենք պետական մարմինների, համայնքային իշխանությունների, միջազգային կազմակերպությունների և տեղական ձեռնարկատերերի հետ՝ ձևավորելով արդյունավետ գործընկերային միջավայր:

Հիմնադրամի ներկայացուցիչը հասարակական խորհրդում կլինի հիմադրամի տնօրեն՝
Ալիսա Օհանյանը
Հեռ.՝093190205
Էլ. հասցե: info@eventtoura.org

«ԷվենտՏուրա Իրադարձային Զբոսաշրջության Զարգացման» հիմնադրամի տնօրեն

Ալիսա Օհանյան